

ՎԱՐՂԱՆ ՄԱՆՈՒՅԱՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ՓՈՒԼԸ (1894—1904)

Ա. Հ. ՀԱԿՈՑԻ

1894-ին Վարդան Մախոխյանը փայլուն առաջադիմությամբ ավարտում է Բեռլինի Գեղարվեստի ակադեմիան: Նրա դիպլոմին համարժեք նշանակություն ունեցավ իր ուսուցչի՝ Ֆրեդերիկ Գադեյի (1825—1903 թթ.) խոսքը. «Այլևս սովորեցնելու բան չունեն բեզ»: Պրոֆեսորը, իբրև հիշատակ, Մախոխյանին նվիրում է իր էտյուդներից մեկը:

Բեռլինյան միջավայրում ձեռք բերած համբավը, ակադեմիայի դասախոսների և ուսանողության ջերմ վերաբերմունքը առիթ են դառնում երիտասարդ նկարչի՝ Բեռլինում մնալուն:

Մախոխյանը որոշ ժամանակ նկարում է բնության, մասնավորապես դաշտային ու մերձքաղաքային տեսարաններ: Նա միաժամանակ պատրաստվում է մասնակցելու գերմանացի պրոֆեսիոնալ նկարիչների բեռլինյան 1895 թ. ամենամյա ցուցահանդեսին, որը կազմակերպվում էր Կայսերական գրասենյակի անմիջական հովանավորությամբ: Այդ ցուցահանդեսին մասնակցելը հատկապես երիտասարդ հարավցու համար կապված էր մի շարք բարդությունների հետ: Գերմանացի պրոֆեսիոնալ շատ նկարիչներ էին երազում մասնակցել խիստ հեղինակավոր այդ ցուցահանդեսին: Ընդ որում, դրա համար նրանք կանգ չէին առնում միջոցների առջև: Մախոխյանի գործերն անվերապահորեն ընդունում են: Ցուցադրությունից հետո Հ. Անդրեասյանը պետք է գրեր. «Ասկե վերջ այլևս խիստ դիրին կըլլար Մախոխյանի մեծամեծ քայլերով յառաջանալը... Միայն ճշմարիտ տաղանդն ու կարողությունն են, որ ճանապարհ կը հարդարեն ու ասպարեզը ազատ կը թողուն, մինչդեռ ոմանք այդ ցուցահանդեսին մասնակցելու համար օգտագործում են բարձր անձնատրուքանց ծանօթությանը ձեռք բերուած յանձնարարությունները, դրանը, ոքելամը և կարգ մը ուրիշ ստորացուցիչ բժնումներ»¹:

Բացի ծովային մեկ-երկու պատկերներից, ցուցահանդեսում Մախոխյանը ներկայացրեց նաև «Գլուղական մենություն», «Լեռնային տեսարան ձմռան մեջ», «Դեպի լեռներ», «Հին կաղնիների մոտ» կտավները: Այստեղ արդեն զգացվում է նկարչի նախասիրությունը հատկապես ձմեռային տեսարանների նկատմամբ: Մախոխյանը բնությունը պատկերում է տարբեր դիտակետերից, տարբեր պահի ու տրամադրության արտահայտմամբ՝ հասնելով խոհափիլիսոփայական ընդհանրացումների: Հավանաբար դա նկատի ունեն Զ. Պերկեզը՝ գրելով. «Այս դաշտագետիկներում ու ձիւնապատ անդաստաններին տիեզերքի մեծությունն ու խորությունը դիտողին կը քափանցե ու զայն կը ցնցե: Սկզբնական ազդեցութեան զաղտնիքը, որ այս արուեստէն կը ծագի, զեղարուեստագետի անսանձելի ալիւնն է, սակայն չի կրնար երբեք արգիլել նրբությունը, հիմնատրուքիւնն ու նկարին յղկումը»²:

Ցուցահանդեսին հաջող մասնակցությունն ամենայն հավանականությամբ ստեղծում է նյութական որոշակի հնարավորություններ, որի շնորհիվ Վ. Մախոխյանը ձեռնարկում է ճանապարհորդություն Ռուսաստան, Ղրիմ, ապա իր հայրենի Տրապիզոն:

Այդ ճանապարհորդությունն անձնական և ստեղծագործական առումով քայտորոշ է դառնում երիտասարդ նկարչի համար: Դրա անմիջական տպավորությամբ ստեղծում է ոռուսական բնության մի շարք առաջնակարգ կտավներ: Իրականություն է դառնում նաև Մախոխյանի վաղեմի իրձը՝ հանդիպել ծովային պատկերի համաշխարհային վարպետի՝ Հովհաննես Այվազովս-

¹ Հ. Անդրեասյան, Վարդան Մախոխյան, «Հուշարար», նոյեմբեր 5, 1908:

² Զ. Պերկեզ, Վարդան Մախոխյան, «Շանթ», 1912, Ա, N 22, մայիս, էջ 351:

կու հետ: Այցելելով Ղրիմ՝ Թեոդոսիայում նա հյուրընկալվում է Այվազովսկուն: Ռաֆայել Շիշմանյանը նշում է, որ Հ. Այվազովսկին հայրական ջերմ վերաբերմունք է ցույց տվել երիտասարդ հայ նկարչին³: Դեռևս Մանասարյան վարժարանում սովորելու տարիներին նրա հայացքը միշտ էլ Հովհաննես Այվազովսկու՝ պատերին փակցված կտավներին էր:

Թեոդոսիայից հետո Վ. Մախոխյանը մեկնում է իր ծննդավայրը: Ցավոք, դրանք այն տարիներն էին, երբ Օսմանյան Թուրքիայի պարագլուխները սկսել էին իրենց հայահալած քաղաքականությունը՝ կազմակերպելով կոտորածներ, տեղահանումներ: Հայ բնակչությունը գաղթում էր Եվրոպա, Ռուսաստան: Տրապիզոնը անհյուրընկալ գտնվեց իր տաղանդավոր որդու նկատմամբ: Ի դեպ, Օսմանյան կայսրության այդ հակամարդկային քարքարոս քաղաքականությունն էր պատճառը, որ Հովհաննես Այվազովսկին վերջնականապես հիասթափվեց թուրքերից՝ իր ծայնը քարձրացնելով նրանց ոճրագործությունների դեմ⁴:

Այդ թո՛հ ու թո՛հի ժամանակ էլ Մախոխյանների առեմիկ ընտանիքը մասնատվում է ու ցրվում:

Կարճ ժամանակից հետո Մախոխյանը վերադառնում է Բեռլին, իսկ ծնողները տեղափոխվում են Ռուսական կայսրության սահմանները՝ հաստատվելով Բաթումում: Այստեղ էր գտնվում Մախոխյանների առևտրական տան մասնաճյուղը:

Վարդան Մախոխյանը ծովանկարիչ է, մեծ ծովանկարիչ: Քիչ է, սակայն, ի դեմս Մախոխյանի տեսնել միայն ծովանկարչի:

Հիմնականում այդպես է ընդունված: Սակայն Վարդան Մախոխյանի ցամաքային բնանկարներում կան գործեր, որոնք չեն զիջում եվրոպացի, ռուս և հայ շատ անվանի վարպետների նույն ժանրի աշխատանքներին⁵:

Մասնագիտական գրականության մեջ Մախոխյանի այդ շրջանի աշխատանքներից առանձնացվում են «Չմեղը Կովկասում», «Փոթորիկ Սև ծովում», «Ռուսական տափաստաններ», «Ռուսական գյուղը ձմռանը», «Ռուսական ձմեռ», «Գյուղական տնակներ», և ս մեկ-երկուսը, որոնք ցուցադրվում են Բեռլինում և այլ քաղաքներում: Հատկապես ուժեղ տպավորություն է թողել ռուսական բնանկարների շարքը, որտեղ նկարիչը խորապես զգացել է ռուսական հողն ու ոգին: Ընդ որում, Մախոխյանը դա արտահայտում է հնարավորին չափ պարզ ու դիպուկ:

Հետաքրքրական է «Ռուսական ձմեռը»: Ուշ երեկո է: Փայտե ցանկապատի ներսում մի քանի քարձրատանիք տնակների փոքրիկ պատուհաններից առկայծում են լապտերների թույլ լույսերը: Դա բանաստեղծական գրավիչ մի տեսարան է. այդ տրամադրությունը աստիճանաբար դուրս մնաց Մախոխյանի պրակտիկայից: Նկարում հիանալի է համադրված նուրբ կապտականաչավունի երանգները շագանակագույնի և դեղնաարծաթավունի հետ, որոնք ջերմ մթնոլորտ են ստեղծում:

Գունային հետաքրքրական լուծումով է տրված «Գյուղական տնակներ» կտավը: Թվում է՝ ձմռան վերջին օրերն են, երեկոյան արևի ճառագայթներն ողողել են ամեն մի անկյուն: Կապտականաչավունի, օխրայի, դեղնակարմրավունի երանգները գրավիչ են դարձնում միջավայրը: Հեռվում՝ երկնքի մոլի տակ, երևում են ձյունից ազատված տափաստանային բլուրտները:

«Ռուսական գյուղ ձմռանը» նկարում թեմայի լուծումը հակված է ավելի էպիկական ձևին: Գյուղի մատույցներն են: Ոչ քարձր բլրակի վրա ասես ձեռք ձեռքի շարվել են կաղնու հաստաբուն ծառերը: Բարձունքից այն կողմ նկատվում են գյուղի ծայրում գտնվող մեկ-երկու տնակների թեք տանիքներն ու ծխնելույզներից դուրս եկող ծուխը: Չմեռային երկինքը ներկայացված է խորհրդ-

³ Տե՛ս Ռ. Շիշմանյան, Բնանկարներ ու հայ նկարիչները, Երևան, 1958, էջ 291:

⁴ Հ. Այվազովսկին իր գայրույթն արտահայտեց նաև վրձնով՝ մինչ այդ ծովը նետելով օսմանյան շքանշանները: «Չե՛ր սուլթանն էլ իմ նկարները կարող է ծովը նետել» խոսքերը շարտելով թուրքական կոնսուլի երեսին: Այս թեմայով կատարած Հ. Այվազովսկու աշխատանքներից են «Հայերի ջարդը Տրապիզոնում» (1895 թ.), «Բեռնաթափում. կենդանի հայերին թուրքերը բափում են Մարմարա ծովը» (1897 թ., գրչանկար), «Կովկասի կանանց փախցնող թուրքական նավի գրավումը ռուս նավաստիների կողմից» (1883 թ.), «Հայերին ցնում են նավերը» (1897 թ.): Կան մի շարք այլ աշխատանքներ և ս. տե՛ս Մ. Մարգարյան, Մեծ ծովանկարի կյանքը, Երևան, 1990, էջ 389, Ե. Խաչատրյան, Հ. Այվազովսկի, Երևան, 1984, էջ 13:

⁵ Ի դեպ, մի շարք նշանավոր ծովանկարիչներ սկզբնապես զբաղվել են ցամաքային տեսարաններ պատկերելով: Մեզանում նույնիսկ Արսեն Եաբանյանը ծովանկարին անդրադարձավ ավելի ուշ՝ դաշտային նկարներից հետո, սակայն ծովանկարների միջոցով նա արժանացավ ճանաչման: Տե՛ս Ռ. Շիշմանյան, Բնանկարն ու հայ նկարիչները:

դավոր անպամաճությամբ. խոնավ օդը մշուշի պես պատել է հեռուները: Մուգ տոների, լույս ու սովերների հետաքրքրական հարաբերություններով նկարիչը վերարտադրել է ուսական ցրտաշունչ բնության անկրկնելի պատկերը: Առաջին պլանում սովալլուկ գայլեր են՝ դնչները վեր ցցած. ասես փնտրում են իրենց գոհին:

Ռուսական բնանկարների մեծ մասում նկարիչը շեշտել է այդ բնաշխարհի ինքնատիպ վեհությունն ու գեղեցկությունը: Դրանցում չկան մարդկային ֆիգուրներ, որոնք, թվում է, կարող էին աշխուժացնել կտավը, տալ ժանրային երանգ, սակայն դրանով կիսաթարվեր աշխատանքի էպիկական հնչեղությունը: Այդ տրամադրությամբ են կատարված նաև «Չմեռը կեչիների մոտ», «Չմեռը անտառում», «Չմեռ», «Լեռնային տեսարան ձմռան մեջ», «Հին կաղնիների մոտ», «Բնանկար անտառում» և մի քանի այլ կտավներ:

«Չմեռը անտառում» ավելի բանաստեղծական տպավորություն է թողնում. հատկապես ձյան ծածկոցից ազատվող ծառերն ու թփուտներն իրենց գունային խաղերով դաշնում են ձյան հարթության հագիվ նշմարելի կապույտի ու սպիտակավարդագույնի վետվետումների հետ: Նկարչին հրապուրել է ձմեռային վերջին օրերի գունային տպավորությունը, տեսարանի բազմերանգ նրբությունը՝ կառուցված կիսատոների մեղմ ու զուսպ հարաբերություններով:

Հորինվածքային կառուցվածքով մնանվում են «Լեռնային տեսարան...» ու «Հին կաղնիները...»: Երկու դեպքերում էլ կտավի կենտրոնում իշխում են հզոր կաղնիները՝ կենաց ծառի նման մատնացույց անելով միշտ զարմացնող բնության անհիմանալի առեղծվածը: Միայն թե առաջին դեպքում դիտակետն ընտրված է լեռնային բարձունքը. ցածում՝ փոս ընկած դաշտում, գյուղի ծայրամասն է՝ սպիտակագույն եկեղեցով: Երկրորդ նկարում կաղնու հզոր էությունն է շեշտված. հագիվ նկատելի մի որսորդ իր շան հետ մոտենում է ծառին: Հատկանշական է, որ վերջիններս փոքր են ու աննկատելի, այլապես պատկերի խորհրդավոր տպավորությունը կվերածվեր ժանրայինի:

Ռուսական այդ գողտրիկ բնապատկերներում Մախոխյանը դրսևորել է իր տաղանդի լիրիկական կողմերը՝ բարձր ճաշակն ու զգացմունքները:

Մախոխյանը հետևողական ռեալիստ էր՝ դաստիարակված Բեռլինի Գեղարվեստական ակադեմիայում և հոգեհարազատորեն շարունակում էր 19-րդ դ. երկրորդ կեսին Գերմանիայում առաջատար դեր կատարող ռեալիստական արվեստի ավանդույթները (Ա. Մենցել, Վ. Լայբլ, Վ. Բուչ, Մ. Լիբերման): Դրավերջին և 20-րդ դ. սկզբներին ասպարեզ են գալիս քննադատական ռեալիզմի ներկայացուցիչները՝ գծանկարիչները: Նույն ժամանակ տարածում է գտնում նաև իմպրեսիոնիզմը, սիմվոլիզմը, մոդեռն ոճը...

Մախոխյանը՝ որպես բնանկարիչ, հավատարիմ մնաց ռեալիստական արվեստին: Նրա բնանկարները հեռու են զուտ արտաքին շահեկանության՝ երբեմն մտացածին գունային տպավորություններից, որոնք կարող էին «հնացած» համարվել ժամանակի «չյմեցուցիչ նորարարությունների» հարթության վրա: Մախոխյանը ռեալիստական դժվարին ու բարդ ձևերի մեջ էր կատարում իր փնտրումները՝ աշխատելով պահպանել տեղանքին ու եղանակին բնորոշ հատկանիշներն ու կոլորիտը: «Չմեռային երեկո Բեռլինի շրջակայքում» նկարն, օրինակ, առաջին հայացքից կարծես թե տխուր ու անհրապույր մի տեսարան է. զգում ես ճնշող մի ամայություն: Սակայն, ձյունածածկ ընդարձակ հարթությունը, ծերացած հաստաբուն ծառերը, մուգ երկինքը և ընդհանրապես կապտասպիտակի, հողականաչի և շագանակագույնի տոները, որ, թվում է, ավելի շատ են, քան որևէ այլ նկարչի ներկապնակում, ցուցադրում են գերմանական մերձքաղաքային միջավայրի կոլորիտն ու խոնավ եղանակը:

Ճշմարիտ արվեստի ուժը զգացող տեսարաններն ըստ արժանվույն են գնահատել Մախոխյանի այդ գործերը: Ա. Սքարսելլին գրում է. «Չիւնը: Ահա դարձեալ կը փոխուի արուեստագէտը. երկիրներում հետ կը փնտոտ բնութեան ուրիշ տպատրոփիւնները, սակայն իր կորովի խառնուածը չի փոխուի, այլ՝ իր բարեշրջումիւն կը հետևի ու կը սուզի ձիւնի մէջ, ինչպէս երկիրներում ու ծովին: Ու ծովին պէս մեր առջև կը պատկերացնէ ձիւնը, ճշմարիտ ձիւնը. անկիպ որ սովոր է տեսնել զայն, այն միայն կրնայ գնահատել անոր բարձր արժանիքը, այն արագ զննութիւնները զոր մարդ կրնայ ընել տեղային անձկութեան վայրկեանի մը մէջ՝ միջոցներու սովորական պարզութիւնով, արուեստի և զգացումի սովորական լայնամիտ տեսութիւնով»⁶:

Չարմանում ես, թե ինչպես է հնրավում ծնված ու ելրոպայում կրթություն ստացած նկարչի

⁶ Առաջ Մշտրուելի, Մախոխյանի ցուցահանդեսը, «Գեղունի», Վենետիկ, 1902, N 4—5—6:

րիչն այդքան խորը զգացել ռուսական բնաշխարհի շունչը, այդ երկրի չոր, սառը ու փոքր-ինչ հեքիաթային ձմեռը: Ռուսական ձմեռային բնանկարները Մախոխյանին գերել էին: Նա ոգևորվել է դրանցով, և դա նկատվում է նրա մոտեցման մեջ. անթաշույց ջերմություն կա, լիրիկական-էպիկական զգացում, ձյունով ծանրաբեռնված հիմնավորը կաղնիներն ու փշատերև ծառերը, փայտե պարզ ու հասարակ տնակներն՝ անտվոր բարձր տանիքներով, ռուսական վառարանների ծխնելույզների ծուխը, փայտե ցանկապատերն ու անծայրածիր դաշտերը... Դա Ռուսաստանն է, հեքիաթի պես Ռուսաստանը: Ուշագրավ է, որ ռուսական բնանկարների մեջ, հակառակ մեթոդիկ-նյան գորշության, օգտագործվում են նաև տաք երանգներ: Մի պահ մտաբերում ես Անդրե Գրաբարի «Մարտյան ձյունը»: Նկարիչը տիրապետում է պատկերի ամուր կառուցվածքին ու հեռանկարի հիմունքներին: Այն, ինչ Մախոխյանը «տեղծում է կտավի վրա, դա բնության կարճատև ու անցողիկ պահը չէ, բնության հայելին կամ նրա պարզունակ ընդօրինակությունը չէ: Յուրաքանչյուր դեպքում Մախոխյանը վերլուծական մոտեցում է ցուցաբերում՝ ամեն մի դետալ տրամաբանորեն ներդաշնակված պատկերի ներքին իմաստին: Մախոխյանը ներկայացնում է ռուսական բնապատկերի ընդհանրացված էությունը, նրա համադրական նկարագիրը:

ՎԱՂ ՇՐՋԱՆԻ ԾՈՎԱՆԿԱՐՆԵՐԸ

Վերևում ակնարկ եղավ, որ 1895 թ. Բեռլինյան ցուցահանդեսից հետո Վարդան Մախոխյանը ուղևորություն է կատարում իր ծննդավայրը՝ Տրապիզոն: Նա գնում է Ռուսաստանով և այդ ընթացքում իրականացնում իր վաղեմի իղձը՝ այցելել Հովհաննես Այվազովսկուն: Այժմ արդեն Գեղարվեստի ակադեմիան ավարտած նկարիչը հնարավորություն ուներ մոտիկից ծանոթանալու մեծ վարպետի հետ, ունկնդրելու հանճարեղ ծերուկի խորհուրդները, օգտվելու նրա ձեռքբերումներից:

Եվ իրոք, սկզբնական շրջանում Մախոխյանի գործերում նկատելի է Այվազովսկու արվեստի բարերար ազդեցությունը: Դա վերաբերում է պատկերի կառուցման մեթոդին, հորինվածքների կազմակերպմանը՝ ծովի յուրահատկությունները կերպավորելու եղանակներին, տեղանքի և օրվա պահերի տրամադրության արտահայտմանը: Հիշենք՝ Այվազովսկու «Գիշերը ծովափին» (1837), «Հին Ֆեոդոսիան» (1839), «Նեապոլիտանական ծոցը» (1842), «Նեապոլիտանական ծոցը առավոտյան» (1843), «Նեապոլիտանական ծոցը գիշերով» (1850), «Գևորգյան մենաստան» (1846), «Երեկոյան Դրիմ» (1848), «Ֆեոդոսիա» (1875), «Երեկո. իտալական բնանկար» (1858) և այլն: Այդ պատկերներում առկա են հովվերգական խաղաղություն, բանաստեղծական ներշնչչանք, հանգիստ ու մշուշոտ ծով, որի վրա փայլատակում են մայր մտնող արևի վերջին շողերը, գունազեղ ափերը...⁷:

Վ. Մախոխյանի նկարներում էլ նման տեսարաններ կան, միայն թե չհասցված Այվազովսկու երևակայության չափերին: Այսպես, Մախոխյանի «Ավերակ Սև ծովի ափին» (1900-ական թթ.) կտավը հիշեցնում է Այվազովսկու «Աշտարակ նավաբեկություն» (1847 թ.) և «Աշտարակներ ժայռի վրա Բոսֆորի մոտ» (1859 թ.) աշխատանքները: Մախոխյանի նույն շրջանում կատարած «Ծովանկարը», և նման մի քանի այլ կտավները, թվում է, անմիջապես ներշնչված են Այվազովսկու «Գևորգյան վանք» (1848 թ.) և «Ծովային տեսարան» (1841 թ.) կտավներից⁸:

Այվազովսկի-Մախոխյան արվեստի առնչությունները չեն վրիպել արվեստաբանների ուշադրությունից. թեև զգուշությամբ, բայց դա ակնարկվել է. «... արդի ժամանակներու նկարչական հայ փոքրիկ աշխարհին մեջ ծովանկարչական աչքառու դպրոց մը երեւան եկած է Յ. Այվազովսքիի ուղղակի կամ անուղղակի ազդեցութեան տակ եւ այդ դպրոցի կարկառուն ղեմքերու շարքին դասած էի նաեւ Մախոխյանը: ... Դեռ Սանասարեանի ուսանողութեան տարիներուն, նույն հաստատութեան սրահները զարդարող Այվազովսքիի մէկ երկու ծովանկարները խոր տպաւորութիւն թողած են անկասկած պատանի Մախոխեանի նկարչական հակումների վրայ եւ ուղղութիւն տուած անոնց դէպի ծովանկարչութիւն: Նոյն իսկ թեքնիքի տեսակէտով տեղ տեղ որոշ առնչութիւններ կան Մախոխեանի նկարներէն ո՞սանց եւ Այվազովսքիի արուեստին միջեւ, ինչպէս զոր օրինակ, առաջին գծի ալիքներուն վրայ փրփուրի երկարատր կերպարաւորումները...»⁹:

⁷ Ակամայից մտաբերում ես ինչ-որ չափով կլասիցիստական ավանդույթները՝ միայն թե համեմատված քնարական ողորմողական ձևերով: Հեռավոր զուգորդություններ են անցնում Թյունների, Միլվեստր-Շչեդրինի, Ֆեսսելի գործերի հետ:

⁸ Այստեղ մասամբ իր դերն է խաղացել նաև տեղանքի նույնությունը:

⁹ Ռ. Եղջանյան, Նկարիչ Վ. Մախոխյան, «Ամսօր», 1937, N 3—4, էջ 73:

Այսուհանդերձ, ընդհանրությունները դրանցում մասնակի են, էլ չենք շեշտում Այվազովսկու և Մախոխյանի կտավների մակերեսի մշակման գանձազանություները¹⁰ :

Վարդան Մախոխյանը կիրառում է բնության ուսումնասիրման սեփական փորձը, տարրերը համադրելու իր մեթոդներն ու ճաշակը: Դրա շնորհիվ Մախոխյանի, այսպես ասած, «Մերձայվազովսկյան» շրջանի գործերը, ի տարբերություն հայ մյուս ծովանկարիչների (օրինակ՝ Է. Մահտեսյան, Մ. Ծիվանյան), երևույթի ներքին ընկալմամբ տարբերվում են հանճարեղ ծերուկի գործերից:

Մախոխյանի ծովը անմիջական տպավորությամբ է արված, ասես պլեներային «գիտականորեն իրապատ» (Ռ. Շիշմանյան) արտահայտությամբ: Մախոխյանի աշխատանքները աչքի են ընկնում գունաշարի (կոլորիտ) որոշակի զսպվածությամբ, ներկերի հյութեղ քավածքով ու ամուր վրձնահարվածներով: Այդ ամուր մակերեսն առիթ է տվել Մախոխյանի արվեստը բնութագրել որպես ջրային քանդակումներ¹¹, որի վրա կարելի է «քայել»: Ծովի հեղաբեկումները Մախոխյանը որսում է անսովոր ճշգրտությամբ:

Այվազովսկու մնամ Մախոխյանը ևս լավ է ուսումնասիրել գույների՝ միմյանց վրա ներգործելու ամենամուրթ բազեցությունը, տեսել գծեր ու թծեր, որոնք դիտողի համար աննկատելի համախմբում են՝ ավելի տպավորիչ ու շահեկան դարձնելով պատկերը: Միայն թե այդ բոլորը կատարվում է այլ մտեցմամբ¹²:

Ռուսաստան և դեպի հայրենիք կատարած ճանապարհորդության ընթացքում Վ. Մախոխյանը բավականին էտյուդներ էր նկարել Սև ծովի տեսարաններից: Եվ ահա, մի կարճ ժամանակ Բեռլինում անցկացնելուց հետո, մա ձեռնարկում է նոր ճանապարհորդություն, այս անգամ դեպի հյուսիս՝ նախ Բալթիկայի ափերը, ապա՝ Շվեդիա և Դանիական կղզիներ: Նա հատկապես հրապուրվում է Քատեկատի և Բորնհոլմ կղզիների ջրերով:

1900 թ. Բեռլինում կազմակերպվում է մեծ ցուցահանդես, որտեղ Մախոխյանը ներկայացնում է իր շրջագայությունների արդյունքում ծնված գործերից մի քանիսը՝ մասնավորապես «Տրապիզոնի միջի վանքը», «Բորնհոլմ կղզին», «Արևմուտը Սև ծովի վրա», «Չմեղը Կովկասում» և այլն:

Ընդհանրապես, 900-ական թվականներն եղել են երիտասարդ Մախոխյանի եռանդուն գործունեության շրջաններից մեկը, որը, սակայն, հավաստի փաստագրություն չի ստացել մասնագիտական գրականության մեջ: Հատկապես շփոթություններ կան նրա անհատական ցուցահանդեսների կապակցությամբ: Այսպես, օրինակ, Եղիշե Մարտիկյանը նշում է, որ Մախոխյանը ցուցահանդես է բաց արել Բեռլինում՝ ներկայացնելով 82 աշխատանք¹³: Իրականում, ինչպես փաստում են ժամանակի մամուլում հրապարակված նյութերը, Մախոխյանի անհատական ցուցահանդեսը 82 աշխատանքով կազմակերպվել է 1902 թ.-ին ոչ թե Բեռլինում, այլ Կահիրեում՝ տեղի Արվեստագիտական ակումբում: Ցուցահանդեսը լայն արձագանք է գտնում արվեստասեր հասարակության շրջանակներում: Անվանի արվեստաբան Ադոլֆ Սքարսելլին այդ կապակցությամբ գրում է. «Բեռլինում քննակող հայազգի նկարիչ պարոն Վարդան Մախոխյանը, որ արժանապես ինքն իրեն փառաբանեց Գեղարվեստական ակումբի (Circolo Artistico) հանդիսասարահի մեջ ցուցադրելով 82 աշխատանք՝ գրեթե բոլորն էլ կատարված մեծ հմտությամբ... Ցուցահանդեսը մեր

¹⁰ Այվազովսկին բնության բոլոր գույները տեղադրում է կտավի վրա, բայց այնպիսի մշակվածությամբ, մշուշ հիշեցնող նուրբ անցումներով, որ ակամայից մտաբերում են հանճարեղ Լեոնարդոյի «Սֆումատոն»:

¹¹ Ասես մի պահ վրձնի հրաշագործ ուժով գունազեղ ու հարափոփոխ ջրերը կանգ են առել ու քարացել:

¹² Ուշագրավ մի զուգորդություն ևս. Մախոխյանի ձեռնային պատկերների մասին խոսելիս նկատենք, որ Այվազովսկին ևս բազմիցս անդրադարձել է ձեռնային-ձյունապատ տեսարաններին և մեծ մասամբ, ինչպես Մախոխյանը, ավելի էպիկական, խոհափիլիսոփայական ընկալմամբ: Վերջին հաշվով ձյունն էլ ջրի տարատեսակն էր, ջրի այլ վիճակը, այլ կերպարանափոխությունը, որը չէր կարող անտարբեր բողմել ջրի իսկական սիրահարներին: «Նկատելի հասարակաց երեսույթ մըն է, որ ծովի տաղանդաւորները (Այվազովսկի, Մախոխյան, Մահտեսյան...) առ հասարակ կը սիրեն ձիւն նկարել, ըլլայ երդիքներու վրա, ըլլայ անտառի մէջ, մեծավայրերու բարձունքներու վրայ, ուր քամին մը վայրի ծառատունկեր կը խոկուն: Գուցէ այս ուղղութեան ներքեւ անոնք կը զգան յագուրդը հաւեթական խաղաղութեան ու խորհրդի...» (Հ. Անդրաս Խրջագնամ, Հովհաննես Այվազովսկի ծովանկարիչ, «Հանդես Ամսօրեան», 1934, էջ 175—176):

¹³ Տես Ե. Մարտիկյան, Հայկական կերպարվեստի պատմություն, գիրք Դ, Երևան, 1987, էջ 11:

առջև կապատկերացնի ծովը, մեծ ծովը իր զանազան երևույթներով. մեր աչքի առջև այն կծփացնի գողտը զգացումով, լայնարձակ ձևով և անհասանելի հորինվածքով: Ըստ իս, քիչ են այն նկարիչները, որ նրա մասն ճշմարտապես ըմբռնած լինեն ծովը: Քչերը եղան, որ կարողացան քափանցել խոռվահույզ կամ անդորր ալիքների մեծ խորհրդի մեջ և վրձնի արվեստով կարողացան ծովի բոլոր քաբուն գաղտնիքները խլել»¹⁴:

Մախոխյանի ցուցահանդեսին անդրադառնում է նաև եգիպտական եվրոպալեզու մամուլը՝ «Le Brogres», «Journal du Coire», «La Bourse Egyptien» և այլն: Տեղի «L Brocret» ֆրանսիական հանդեսում քերթի մեկնարանը հիացմունքով է խոսում Մախոխյանի ինքնատիպ տաղանդի մասին:

Մեզ հաջողվել է պարզել վերոհիշյալ 82 աշխատանքներից 38-ի անվանումները: Ցուցադրված մեկ տասնյակից ավելի նկարներ մասնագետները համարել են կատարելության հասած գործեր: «Չմոռան երեկո Բեռլինի շրջակայքում» կտավի կապակցությամբ նույն Մքարսելլին գրում է. «Մեծ նկարը ի ցույց դրածներում մեջ ամենակատարեալներն են կն. է. այդ նկարին համար քննադատություն չեն կրնա գտնիլ. կարելի էր ամեն բան ըսել, բայց ճիշտ պիտի չլրար»¹⁵: Կամ՝ «Հայ վանքին մը ավերակները վերջալույսի ժամանակ» նկարը առանձնապես կսիրեն: Այս նկարի մեջ, որ ես պիտի անվանեմ «անհուն ու տխուր մայրամուտը վերջոյ» բովանդակած է նկարչին, արվեստագետին, բանաստեղծի հոգին»¹⁶: Ե. Մարտիկյանը ենթադրում է, որ այդ նկարը նվիրված է Տրապիզոնի հայկական վանքերից մեկին և, հավանաբար, նկարել է ակադեմիան ավարտելուց հետո՝ ծննդավայր այցելության ժամանակ՝ 90-ական թվերի վերջին¹⁷:

Ընդհանրապես Կահիրեի ցուցահանդեսը մեծ տպավորություն է թողել: Միաբերան շեշտվել է Մախոխյանի նկարների կատարյալ լինելը, նկարչի մեջ բանաստեղծական երևակայության պարագան. «Ծովը, լայնածավալ ծովը, մերթ մթագնած, դողդոջում, մերթ հանդարտ և խաղաղ կամ փրփրալից և եռուն կը ներկայանայ Չեզ ամբողջ շարք մը նկարներու մեջ: Երիտասարդ նկարիչը հրապուրված հմայիչ ծովէն, նախընտրած է զայն ի հանդէս գալու համար երանքներուն բազմազանութեամբ և աչքի ընկնող ճծորթեամբ մը»¹⁸:

Փաստերը վկայում են՝ Վարդան Մախոխյանը բազմիցս է այցելել Եգիպտոս: 1911 թ. «Թեռնիկ» հանդեսից տեղեկանում ենք, որ նկարիչը 1902 թ. հետո ևս երեք անգամ եղել է Եգիպտոսում և կազմակերպել մասնակի ցուցադրություններ:

Պետք է ասել, որ 1900-ական թթ. սկզբներին Մախոխյանը ոչ միայն Եգիպտոսում, այլ նաև Գերմանիայում, Ֆրանսիայում, Իտալիայում մի քանի ցուցահանդեսների է մասնակցել:

900-ականների սկզբներին Մախոխյանի կտավներում անվերապահորեն գերակշռող է դառնում ծովանկարը (հիմնականում խաղաղ տեսարաններ): Ծիշտ է, հանդիպում են արևելքոսթյան անհանգիստ պահեր ևս, բայց դրանք հեռու են փոթորկումներից, ինչն իր խոռվահույզ բունկումներն ունեցավ հետագա աշխատանքներում:

Այդ շրջանի գեղեցիկ ու թախծոտ տրամադրության աշխատանքներից մեկը «Բնանկար» կոչվող կտավն է (1899 թ.): Մի փոքրիկ հատված Սև ծովի ափից: Ջրի կապտականաչավունի բաց ու քափանցիկ երանգները համերաշխում են աշնանային գույներով ողողված ափի՝ փարթամ բուսականությանը, խաղը քարերով շարված պատին ու կելու ծառին: Խոտերի մեջ փոքրիկ խաչքար է, գուցե և մոռացված, որը հուշում է օտար ափերում իր մահկանացուն կնքած հայ մարդու գոյությունը: Հավանաբար այդ վաղ շրջանում են ստեղծված նաև «Կայսր Օգոստոսի հուշարձանը» և «Տափաստան» բնանկարները:

1902—04 թթ. Մախոխյանը վրձնել է մի շարք հետաքրքրական ծովանկարներ՝ «Փոթորկից հետո. մայրամուտ» (1902 թ.), «Նավը ծովում. ամպամած երկինք» (1902 թ.), «Լույս լուսնյակի» (1903 թ.), «Լքված նավակը ծովափին» (1903 թ.), «Մակընթացություն», «Լուսնի ծագումը», «Լուսնակ գիշեր», «Ավերակ Սև ծովի ափին» և այլն: Դրանց մի մասում, շնայած թեմաների մեկնարանման ուրույն ձևերին, այնուամենայնիվ զգացվում է իր մեծ ուսուցչի՝ Հովհաննես Այվա-

¹⁴ Առաջիկա Մքարսելլի, Նկարչություն Գահիրեի մեջ. Մախոխյանի ցուցահանդեսը, «Գեղունի», Վենետիկ, 1902, N 4—5—6, էջ 35:

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ Նույն տեղում:

¹⁷ Ե. Մարտիկյան, նշվ. աշխ., էջ 11—12:

¹⁸ «Նկարիչ Վ. Մախոխյան», «Մշակ», 1902, N 155:

գովակու արվեստի տպավորությունը: Օրինակ, «Փոթորկից հետո. մայրամուտ» աշխատանքում՝ Այվազովսկու այնքան սիրած նավաբեկության թեման է. առազատաճանալը բախվել է ծովային քարերին և շուտ է գալիս: Այնուամայնիս սառը քամուց տատանվող այլքները զուգահեռ շարքերով վազում են առաջ: Երկնքում կուտակվում են գորշ ամպերը, որոնց արանքներից երևում են արևի վերջին շողերը՝ գունավոր արտացոլում գտնելով ջրի վրա: Նույն տրամադրությամբ ու կոլորիտով է «Նավը ծովում». ամպամած երկինք» նկարը: Կարելի է հիշատակել նաև «Մակընթացություն. Նորվեգիա» կտավը: «Լույս լուսնակի» կտավում նկարչին հաջողվել է վերարտադրել ջրի անհանգիստ, շարժուն վիճակը, օդային միջավայրը և հատկապես ձայն կողմում գտնվող հսկայական տպավորիչ ժայռերը, որոնք ջրի ու երկնքի հետ ասես մատնացույց են անում բնության խորհրդավոր գեղեցկությունը:

1904 թ. ուշագրավ մի իրադարձություն տեղի ունեցավ Վ. Մախոխյանի կյանքում. նա դառնում է Բեռլինի Արվեստագետների միության գործուն անդամ¹⁹: 12 հոգուց բաղկացած այդ խորհրդի անդամ լինելը ապացույց էր նրա տաղանդի ճանաչման: Խորհրդի պատվավոր նախագահը կայսր Վիլհելմ 2-րդն էր՝ քմահաճ և խստաբարո մի անձնավորություն, որը, սակայն, հիացած էր հայ երիտասարդ ու տաղանդավոր նկարչի արվեստով: Այդ իրադարձությունը մեծ արձագանք է գտնում հատկապես հայ մամուլում: Ա. Պառավյանը գրում է. «Այսօր իր բազմաթիվ հիացողների մեջ կգտնվեն նաև Վիլհելմ երկրորդ գեղարվեստագետ կայսրը, որ Մախոխյանի մեկից ավելի ծովանկարները տեսնելու առիթ ունեցած է և վերջերս պալատական տոնահանդեսի առթիվ, նկարչի գործերի մասին մեծ գովասանքով խոսած քաղաքիս օսմանյան Նիգամի փաշայի և իր տիկնոջ հետ, իր անձնական գնահատումներն ու տպավորությունները հայտնել է վերջ դեսպան Ամոլին միջոցով ուղղակի շնորհավորելով զինքը»²⁰:

«Հայաստանի կոչնակ» հանդեսն ավելացնում է նաև, որ. «Ինքնահավան, արվեստի հարցերում բժախնդիր և հայերի նկատմամբ անբարեացական տրամադրված կայսրը, անտեսելով այդ բոլորը, ձեռք է բերում Մախոխյանի մի քանի ստեղծագործությունները, ինչպես նաև ծովանկարչի գործերի պատճեններից կազմված ալբոմը»²¹: Ավելին, Վ. Մախոխյանը Վիլհելմ կայսրի կողմից պարգևատրվում է «Կարմիր Արծիվ» շքանշանով՝ մի պատիվ, որին նույնիսկ գերմանացի նկարիչներից քչերն են արժանացել:

«Արվեստագետների միության» նույն թվականին կազմակերպված ցուցահանդեսին Մախոխյանը մասնակցում է մեկ աշխատանքով՝ «Չմեռային տեսարան Բեռլինի շրջակայքից»: Գերմանական հեղինակավոր թերթերը զովեստով են խոսում այդ աշխատանքի մասին: Այն վաճառվում է բարձր գնով²²: Աննախաղեպ հաջողություն: Մախոխյանի անունը ողողում է թե՛ գերմանական և թե՛ հայկական մամուլը: Նրա աշխատանքների շուրջ սկսվում է բանախոսությունների մի ամբողջ շարք, որը երբեմն հասնում է ծայրահեղությունների, մանավանդ անհարկի համեմատությունների ու մրցակցության երևույթ է ստեղծվում Վարդան Մախոխյանի և Հովհաննես Այվազովսկու միջև²³: «Գերմանացի և իտալացի վարպետները,— գրում է Ա. Բերբերյանը,— Մախոխյանի մի քանի ծովային գործերը քննադատելու ատենին ուղղակի համեմատում են հայազգի քաջահամբավ ծովանկարիչ Հ. Այվազովսկու հետ և նույնիսկ ավելի բարձր գնահատում»²⁴: Ընդհանուր ոգևորությունը իր հորձանքի մեջ է առնում նույնիսկ երաժշտագետ Կարա-Մուրզային, որը գրում է. «Մախոխյանի ստեղծագործություններն աչքի են ընկնում արտիստական նուրբ կատարմամբ, ազնիվ պարզությամբ և բնության ընկալման անմիջական գրավությամբ: Իտալական քննադատներից մի քանիսը Մախոխյանի ծովանկարները նույնիսկ բարձր են դասում Այվազովսկու կոմպոզիցիաներից»²⁵:

¹⁹ Տե՛ս «Գեղարվեստ», 1908, N 1: Այդ առիթով Ա. Բերբերյանը գրում է. «... Սիա այդ արթիստների գործուն անդամներն են միայն, որ կարող են ընտրել նկարչության 12 ամենաբարձր անդամները (Juries), որոնք նկարչական աշխարհի հեղինակավոր ձայնը կներկայացնեն»:

²⁰ Ա. Պառավյան, Հայ նկարիչներ. Վ. Մախոխյան, «Շանք», Ղալաթիա, 1912, N 22, էջ 349:

²¹ Տիգրան Նազարյան, Անգուզակու ծովանկարիչ Վարդան Մախոխյան, «Հայաստանի կոչնակ», Նյու Յորք, 1924, N 36, էջ 1288:

²² «Մասիս», Կ. Պոլիս, 1904, հունվար 31:

²³ Տե՛ս «Մեր Տարեցույց», 1911, «Հայաստանի կոչնակ», 1924, N 36, «Վերածնունդ», 1933, N 215:

²⁴ Ա. Բերբերյան, Նկարիչ Վ. Մախոխյան, «Գեղարվեստ», 1900, N 1:

²⁵ Ս. Գ. Կար-Մուրա, Армяне в искусстве, «Армянский сборник» (2-ое издание), М., 1911.

Ըստ էության, մեզն գնահատականները 19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբներին լայն ընդունելություն գտած համեմատական մեխանիկական, մասամբ նաև մակերեսային մեթոդի արտահայտություն էին: Իրականում ծովանկարի այդ երկու տիտանները դավանել են բնության և ծովի տարերքի զգացման և մեկնաբանման տարբեր սկզբունքներ ու մոտեցում: Հովհաննես Այվազովսկին անհամեմատելի էր: Հ. Այվազովսկին 19-րդ դարի ծովանկարչությունը բարձրացրեց իր գազաթնակետին՝ այն շահեկանորեն համատեղելով ոռմանտիկ պատկերավորումների հետ: Այվազովսկու կատարողական հնարածներին, վրձնի վարպետությանն առաջօր որևէ մեկը չի հասել:

Վ Մախոխյանը 20-րդ դ. սկզբի անհանգիստ ու փոթորկոտ ժամանակների, ազգային ողբերգությունների ու պայքարի, խառնակ տրամադրությունների արտահայտիչն էր:

1904 թ. Մախոխյանը կրկին ուղևորվում է Եգիպտոս: Եգիպտոսում գտնվող նրա բժիշկ եղբայրը օգնում է Վարդանին իր աշխատանքների ցուցադրությունը կազմակերպելու: Ցուցահանդեսը բացվում է սկզբում Կահիրեում, ապա Ալեքսանդրիայում: Այս ցուցադրությունները ևս արժանանում են եգիպտահայ մամուլի ուշադրությանն ու գնահատականին²⁶:

Ռ. Շիշմանյանն այդ կապակցությամբ գրում է. «Հարյուր հիսուն կտոր երկերից բաղկացած, որոնցից վաթսուը յուզանկար կտավներ, գտած ընդունելությունը մեղմ եղավ և նկարահանդես փոխադրվեց նաև Ալեքսանդրիա»²⁷:

Փաստորեն, 1904 թ. ցուցահանդեսներով ավարտվում է Վ. Մախոխյանի ստեղծագործական գործունեության առաջին փուլը:

Ա. Գ. Аковян - Первый период творческой деятельности Вардана Макохяна (1894-1904). - О творчестве снискавшего мировую славу, маринниста, Вардана Макохяна до сих пор нет ни одного целостного исследования. Отдельные сведения о нем можно почерпнуть из 4-го тома "Истории армянского изобразительного искусства" Е. Мартикяна и из книги Р. Шишманяна "Пейзаж в армянском изобразительном искусстве". В периодической западно-армянской печати, в первые десятилетия XX века, было немало статей, которые, однако, малодоступны широкому кругу любителей искусства.

Одни из значительных периодов в жизни известного маринниста охватывал годы с 1894 по 1904. Окончив с отличием Берлинскую Художественную Академию, Макохян создал целый ряд пейзажей, которые сразу же привлекли к себе внимание ценителей искусства. В эти годы молодой художник участвовал на многих престижных выставках и удостоился чести быть избранным членом Совета искусств Германии.

В этот начальный период своей творческой деятельности Вардан Макохян особое место уделял морским пейзажам, в чем он опирался на традиции другого великого армянского маринниста - Ованнесса Айвазовского.

²⁶ Տե՛ս «Մասիս», 1904, Պոլիս, մարտ: «Ժողովուրդ», 1904, Կահիրե, N 1—22: «Ամսօր», 1904, N 3 և այլն:

²⁷ Ռ. Շիշմանյան, Վարդան Մախոխյան, «Ամսօր», 1937, N 3—4:

Իհարկե, նույնիսկ հանճարեղ արվեստագետների կյանքը միայն շոնդալից հաջողություններով ու գովեստներով չի անցել: Հաջողություններին երբեմն հաջորդել են անհաջողություններ. մեծ, երբեմն էլ ամենկատ ցուցադրություններ: Մախոխյանի եգիպտական վերջին ցուցադրումները համեստ գնահատականի են արժանացել, որոշ հայ թղթակիցների կողմից նույնիսկ անհարկի թերագնահատվել. «Բոլորն ալ տրտում նկարներ էին,— գրում է արվեստից բավական հեռու կանգնած Ռ. Որբերյանը: — Ամենուն վրա, շատ քիչ բացառությամբ, ծովը կա իր թյուրափոփոխ երևույթներով. կրճատ ասել ամենքն ալ ծովի նկարներ, հագիվ քանի մը հատ մեռած ձյունապատ դաշտեր, հյուղակներ, սակայն ծայրե ծայր դառնագին մեկամաղձութեամբ գծուած, այնպես որ մտախոհ վայրկեան մը դիտելէլ ետքը կզգաս, որ տառապանքի շունչը կանցնէ ճակատիդ և սիրտս հին կարօտներով կը բարբախէ...» (Մախոխյանի ցուցահանդեսը, «Արև ելլան մամուլ», 1904 հունիս):